ՏՐԴԱՏ III-Ի ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ

Իրավ. գիտ. դոկտոր Ա. Մ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հին հայկական պետության պետական-վարչական կառուցվածքում և զինվորական կազմակերպության բնագավառում Տրդատ III-ի (298—330) իրականացրած լուրջ բարեփոխությունները մինչև օրս գիտական հատուկ ուսումնասիրության առարկա չեն դարձել։ Մինչդեռ դրանց հետևանքով առաջացած նոր երևույթների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի հին Հայաստանի պատմության վերջին շրջանը հասկանալու համար։ Ստորև մենք կանգ կառնենք զինվորական կազմակերպության բնագավառում Տրդատ III-ի իրականացրած այն բարեփոխությունների վրա, որոնց ամբողջությունը, մեր կարծիքով, իրենից ներկայացնում էր զինվորական ռեֆորմ։ Եվ քանի որ նման մի ռեֆորմի առկայությունը մեր պատմագրության մեջ քննարկվում է առաջին անգամ, մենք, բնականաբար, հեռու ենք այն մտքից, թե մի հոդվածում հնարավոր է տալ առաջ քաշված պրոբլեմի սպառիչ լուսաբանումն ու հիմնավորումը։ Կատարելով սկզբնաղբյուրների հիմնական փաստերի նախնական վերլուծությունը, մենք համոզված ենք, որ Տրդատ III-ի զինվորական ռեֆորմի հարցը դեռևս կարոտ է խոր և բազմակողմանի ուսումնասիրության.

Նկատի ունենալով, որ աղբյուրների տվյալների համաձայն Տրդատ III-ի զինվորական ռեֆորմը իրականացվել է «ըստ սահմանի կայսերացն յունաց», նպատակահարմար է նախապես համառոտակի կանգ առնել Դիոկլետիանոս (284—305) և Կոստանդինոս (306—337) կայսրերի ժամանակաշրջանում Հռոմեական կայսրության զինվորական կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների վրա։

Հռոմեական կայսրությունը III—IV դդ. գտնվում էր խոր ճգնաժամի մեջ. որն ընդգրկել էր հասարակական կյանքի բոլոր կողմերը։ Ժողովուրդը հյուծվում էր անդուսպ կեղեքումներից։ Երկրի տարբեր մասերում ծավալվում էին ստրուկների և կոլոնների շարժումներն ընդդեմ կայսրության, որ դարձել էր նրանց ոխերիմ թշնամին։ Խիստ վատթարացել էր կայսրության արտաքին դրությունը, հյուսիսային ժողովուրդների դեմ մղվող երկարատև պատերազմները ուժասպառ էին արել պետությունը, թուլացրել նրա ներքին միասնությունը։ Հաճախակի կրկնվող պալատական հեղաշրջումները, կենտրոնական իշխանության անցումը զինվորականների մի խմբից մյուսին՝ ծայր աստիճան անկայուն էին դարձրել երկրի ներքին կա.գը։

Այդպիսին էր, ընդհանուր գծերով, Հռոմեական կայսրության վիճակը. երբ իշխանության գլուխ անցավ Դիոկլետիանոսը, իսկ նրանից հետո՝ Կոստանդինոսը, որոնք մի շարք լուրջ վերափոխումներ իրականացրեցին։ Տիրապետող դասակարգը փորձում էր պետական իշխանության ծայրաստիճան կենտրոնացումով և զինվորական իշխանության ուժեղացումով

կասեցնել կայսրության անկումը։ Այդ բանը նրան որոշ չափով հաջողվեց միայն կայսրության արևելյան մասում՝ Բյուզանդիայում։ Այստեղ է, որ IV դարում ավարտվում է հռոմեական պետության՝ բացարձակ միապետության փոխակերպման պրոցեսը։ Այն քաղաքական կարգը, որ ստեղծվեց Դիոկլետիանոսի օրոք, սովորաբար անվանում են դոմինատ (dominus, տանուտերություն)։ Նոր կարգի համաձայն կայսրության բոլոր խավերը դիտվում էին իբրև կայսրի հպատակներ (subiecti) կամ ծառաներ։ Կայսրը համարվում էր աստվածության մարմնավորում։ Նրա իշխանությունը օրենքով սահմանափակված չէր, ամբողջ օրենսդրական իշխանությունը կենտրոնացած էր նրա ձեռքում։

Դիոկլետիանոսը իրականացրեց երկրի վարչա-տերիտորիալ նոր բաժանում. կայսրությունը նա բաժանեց 12 դիոցեզների, որոնք իրենց հերթին տրոհվում էին պրովինցիաների։ Բաժանելով երկիրը համեմատաբար մանր վարչական միավորների, Դիոկլետիանոսը նպատակ ուներ սահմանափակել տեղական իշխանությունների ինքնուրույնությունը, թուլացնել նրանց ուժը, միաժամանակ ուժեղացնելով կենտրոնական իշխանության հսկողությունը այդ օրգանների վրա և այսպիսով ապահովել կայսրության ներքին միասնությունը։ Նոր կայսրը մեծ ուշադրություն դարձրեց բանակի հզորացման վրա։ Կայսրության սահմանները պաշտպանելու և պետության ներքին միասնությունը ապահովելու նպատակով նա ստեղծեց երկու տեսակ զորամասեր. 1) սահմանապահ զորամասեր, որոնք տեղավորված էին կայսրության արևելյան, արևմտյան, հյուսիսային ու հարավային սահմանամերձ շրջաններում և կոչված էին պաշտպանելու պետության սահմանները արտաքին ներխուժումներից, և 2) պալատական (շարժուն) զորամասեր, որոնք տեղավորված էին կայսրության կենտրոնական շրջաններում և անհրաժեշտության դեպքում կարող էին արագ կերպով փոխադրվել մի վայրից մյուսը։ Միաժամանակ մի շարք միջոցառումներ իրականացվեցին բանակի համալրման և զորավարների ինքնուրույնությունը սահմանափակելու ուղղությամբ։

Դիոկլետիանոսի գործը շարունակեց Կոստանդինոս կայսրը։ Վերջինս Հռոմեական կայսրությունը բաժանեց չորս պրեֆեկտուրաների (Արևելք, Իլլիրիա, Գալլիա և Իտալիա), որոնցից յուրաքանչյուրը ընդգրկում էր որոշակի քանակով դիոցեզներ և պրովինցիաներ։ Պրեֆեկտուրաները գլխավորում էին praefectus praetoria-ները, դիոցեզները vicarius-ները, իսկ պրովինցիաները՝ rector-ները։ Այսպիսով ստեղծվեց տեղական իշխանությունների խիստ կենտրոնացված կարգ, ըստ որում բոլոր պաշտոնատար անձինք միմյանց հետ կապված էին ստորադրելիության հարաբերություններով։ Նկատի ունենալով, որ պրեֆեկտների իշխանությունը տարածվում էր բավական մեծ տերիտորիայի վրա և որ քաղաքացիական ու զինվորական իշխանության կենտրոնացումը նրանց ձեռքում մեծ վտանգ էր ներկայացնում կայսրության միասնությունը ապահովելու տեսակետից, Կոստանդինոսը զինվորական իշխանությունը անջատեց քաղաքացիականից, պրեֆեկտների, դիոցեզների ու պրովինցիայի կառավարիչների ձեռքում թողնվեց միայն քաղաքացիական իշխանությունը, իսկ զինվորական իշխանությունը հանձնվեց չորս զորավարների (magistri militum), որոնց իշխանությունը տարածվում էր տեղական զինվորական հրամանատարների (կոմսերի և դուքսերի) վրա։ Այսպիսով, Կոս-

տանդինոս կայսեր օրոք ավարտվում է Դիոկլետիանոսի սկսած զինվորական ռեֆորմը[1]։

Հայկական սկզբնաղբյուրների տվյալների համաձայն, Տրդատ III-ը, հետևելով Հռոմեական կայսրության օրինակին, վերափոխման է ենթարկում Հայաստանի պետական, վարչական կառուցվածքը և զինվորական կազմակերպությունը։

Ինչպես երևում է այդ աղբյուրներից, մինչև Տրդատ III-ի գահակալությունը և նրա գահակալության սկզբնական շրջանում Հայաստանի բանակի գերագույն հրամանատարը համարվում էր սպարապետը[2]։ Հայրական գահը ստանալուց հետո, պատմում է Խորենացին, Տրդատ III-ը իր դայակորդուն՝ Արտավազդ Մանդակունուն, նշանակում է հայկական զորքերի սպարապետ՝ «վասն լինելոյ նորա նմա պատճառ փրկութեան և հայրենականացն հասելոց փառաց»[3]։ Արտավազդ Մանդակունին սպանվում է Աղվանքում տեղի ունեցած ճակատամարտում։ Պատերազմը հաղթանակով ավարտելուց հետո Տրդատ III-ը մեծ զորքով դիմում է պարսից աշխարհ, «չորս յիւրոցն առնելով զորաւարս, զՄիհրան առաջնորդ վրաց... և զԲագարատ ասպետ և զՄանաճիհր նահապետ ազգին Ռշտունեաց և զՎահան նահապետ Ամատունեաց»[4]։

Խորենացու այս խոսքերից երևում է, որ Արտավազդ Մանդակունու մահից հետո Տրդատ III-ը հայկական բանակի հրամանատարությունը բաժանում է չորս զորավարների միջև, դրանով իսկ վերացնելով նախկինում գոյություն ունեցող սպարապետությունը։ Այդ ռեֆորմով նա հավանաբար ցանկացել է ստեղծել մշտական գործող սահմանապահ զորամասեր։ Բացի դրանից, պետք է ենթադրել, որ, Տրդատի կարծիքով, բանակի հրամանատարության կենտրոնացումը մի մարդու ձեռքում վտանգավոր էր։

Արժանի է ուշադրության Խորենացու մի այլ վկայությունը։ Նա պատմում է, որ Տրդատ III-ի մահից հետո Վրթանես եպիսկոպոսապետը նախարարների հետ միասին դիմում է հռոմեական Կոստանդ կայսրին, խնդրելով զորքով

---

1 Նույն կարգի ռեֆորմ, ինչպես ցույց է տվել Ն. Ադոնցը, տեղի է ունեցել Սասանյան Պարսկաստանում։ Թեպետ այդ ռեֆորմի ժամանակը վերջնականապես դեռևս չի ճշտված, բայց սկզբնաղբյուրների տվյալներից երևում է, որ այստեղ թագավորությունը նույնպես բաժանված էր չորս երկրամասերի կամ քուստակների, որոնց կառավարումը հանձնված էր պադսպանների ձեռքը։ Քուստակները իրենց հերթին բաժանվում էին մարզերի՝ մարզպանների գլխավորությամբ, իսկ մարզերը տրոհվում էին ավելի մանր վարչական միավորումների։ Ըստ արաբական պատմիչ Տարարիի վկայության, Խոսրով Անուշիրվանի ժամանակ տեղի է ունենում զինվորական իշխանության անջատումը քաղաքացիականից։ Մինչև նրա թագավորումը սպահրեդի, այսինքն թագավորության գլխավոր զորավարի պաշտոնը վարել է մի մարդ, իսկ Խոսրովը ստեղծում է չորս պաշտոն՝ Արևելքի սպահրեդի, Արևմուտքի սպահրեդի, Նիմրազի (այսինքն՝ Սմենի) սպահրեդի և Ադարբայգանի սպահրեդի (տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана. СПб, 1908, էջ 214—217)։

2 Սպարապետությունը, գրում է Ս. Տ. Երեմյանը, «ավելի ուշ է առաջացել։ Նախապես, հավանաբար, սպարապետի ֆունկցիաները պատկանում էին հաղարապետին, իսկ պաշտոնապես գերագույն զորավար էր համարվում ինքը՝ թագավորը։ Սպարապետության գործակալությունը առաջ է եկել ըստ երևույթին հայոց Վաղարշ Բ թագավորի (186—198) ժամանակ։ Այս Սեպտիմոս Սեվերոս կայսեր (193—211) ժամանակն էր, երբ Հայաստանի ռազմական կազմակերպությունը արմատական փոփոխության ենթարկվեց» (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 1, Երևան, 1971, էջ 834)։

3 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, գիրք Գ, գլ. ՁԲ, էջ 224։

4 Նույն տեղում, գլ. ՁԵ, էջ 231 (ընդգծումը մերն է— Ա. Դ.)։

օգնել Տրդատ III-ի որդի Խոսրովին թագավորեցնելու համար։ «Այսմ լսող եղեալ Կոստանդեայ, առաքեաց զԱնտիոքոս յարդարիչ իրոյ պալատանն զօրու ծանու, և ծիրանիս հանդերձ պսակաւ»[5]։ Դալով Հայաստան՝ «Անտիոքոս թագաւորեցոյց զԽոսրով, և զչորեսին սպարապետսն մատոյց ի նոյն իշխանութիւն զօրու. զոր կացուցեալ էր Տրդատայ յիւրում կենդանութեանն՝ յետ մեռնելոյ դալեկին իւրում Արտավազդայ Մանդակունւոյ. որ միազլխապետ էր և ամենայն ռայոց զօրավար։ Առաջին՝ Բագրատ ասպետ, զօրավար արևմտեայ գնդին. երկրորդ՝ Միհրան առաջնորդ Վրաց և բդեշխ Ռուզարացւոց, սպարապետ հիւսիսային զօրուն. երրորդ՝ Վահան նահապետ Ամատունեաց արևելեան գնդաւն և զգաղատացի զօրս ընդ նմա՝ առաքեաց զկողմամբք Ատրպատականի, ունի պահ յարքայէն Պարսից»[6]։

Այս վկայության մեջ, ինչպես տեսնում ենք, Խորենացին կրկին անգամ հիշատակում է, որ Արտավազդ Մանդակունու մահից հետո Տրդատ III-ը հայկական բանակի հրամանատարությունը բաժանում է չորս սահմանապահ զորավարների կամ սպարապետների միջև. ըստ որում Խորենացու մոտ խոսքը վերաբերում է Ագաթանգեղոսի ու Փավստոսի մոտ հիշատակված բդեշխներին, գահերեց կամ մեծ իշխաններին. «...Եւ ի զինուորական կողմանէն՝ զչորեսին գահերեցսն իւրոյ տաճարին, որ բդեշխքն կոչեն զառաջին սահմանակալն ի նոր Շիրական կողմանէն, և երկրորդ սահմանակալն յԱսորեստաննաց կողմանեն, և զերրորդ՝ յԱրուստան կողմանէն, և զչորրորդ՝ ի Մասքութեաց կողմանէն»[7]։

Ագաթանգեղոսի ու Փավստոսի[8] մոտ մենք չենք գտնում այն մանրամասնությունները, որ կան Խորենացու երկում, բայց ինչպես Ագաթանգեղոսն ու Փավստոսը, այնպես էլ Խորենացին խոսում են նույն պետական-զինվորական հաստատության մասին։ Այդ պատմիչների հաղորդած տեղեկությունների մեջ կա միայն այն տարբերությունը, որ Խորենացու մոտ դրանք կոչվում են սպարապետներ, իսկ Ագաթանգեղոսի ու Փավստոսի մոտ՝ գահերեց կամ մեծ իշխաններ։ Բայց դա լոկ ձևական տարբերություն է, բանի որ այդ վերջինները նույնպես բարձրագույն զինվորական հաստատության զորավարի անվանակոչումն են։

Բդեշխների մասին որոշ, բայց շատ կցկտուր տեղեկություններ կան Ջենոր Ռլակի մոտ[9]։

Տրդատի զինվորական ռեֆորմի և բդեշխությունների ստեղծման մասին հետաքրքիր և ուշագրավ տեղեկություններ կան մեր միջնադարյան պատմիչ-

---

5 Նույն տեղում, գիրք 3, գլ. Ե, էջ 257—258։

6 Նույն տեղում, գլ. Զ, էջ 258—259 (ընդգծումը մերն է — Ա. Դ.)։

7 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 140։

8 Փավստոսը մի բանի անգամ է գրում բդեշխների կամ մեծ իշխանների մասին. օրինակ՝ «Գայնու ժամանակաւ սպասամրեաց յարքայէն Հայոց մի ի ծառայից նորա մեծ իշխան Ագանեաց, որ անուանեալ կոչէր բդեշխն. որ էր մի ի չորից գահերէց բարձրէրց տաճարին արքունի» (տե՛ս «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Յ. Պետերբուրգ, 1883, գրք. Գ, գլ. Ը, էջ 18, գրք. Դ, գլ. Ը, էջ 135)։

9 «Եւ դրեաց ինքն թագաւորն (Տրդատ) և գահերէց իշխանքն չորեսին յնդիպաղար Նիստրաց-ւոց» (տե՛ս Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 46, 134)։

ների մոտ։ Այդ տեսակետից ուշադրության արժանի են Թովմա Արծրունու[10] և մանավանդ Ստեփանոս Օրբելյանի հաղորդումները։ «Գրիգորիոս Հրամայէ Մեծին Տրդատայ,— գրում է Ստ. Օրբելյանը,— կարգել զթագավորութիւն իւր ոստ սահմանի կայսերացն Յունաց, և տալ ըստ իւրաքանչիւր պատշաճի գահ և պատիւ իշխանացն յաջմէ և յահեկէ։ Որ և գեղեցկապես յօրթնեալ ի ժամ ճաշուն նստել բարձս 400 իշխանաց, որոց գահագլուխք՝ բդեշխն Դուգարաց և իշխան Աղձնեաց, իշխանն Անգեղտան և իշխանն Կորդուաց, ասպետն Բագրատունի և իշխանն Արծրունեաց, իշխանն Սիւնեաց և իշխանն Մամիկոնէից։ Սոքա Լին գահագլուխք ամենայն իշխանացն հայոց։ Իսկ զօրացն և աշխարհիս չորս միայն կացուցանէ իւրոց թագաւորութեան երկրորդ հրամանատարս ի վերայ ամենայնին։ Արևելեան կողմանն՝ իշխան Սիւնեաց 21 իշխանօք. հիւսիսային կողմանն՝ բդեշխն Դուգարացւոց 22 իշխանօք. Արևմտեան կողմանն՝ Կորդուացին 21 իշխանօք. հարաւային կողմանն՝ իշխան Անգեղտանն 22 իշխանօք։ Զայս այսպէս ի գահնամակի իշխանացն հայոց զոր Հեռոդ գրեաց և սակաւ մի ցուցանէ Ագաթանգեղոսին և Ներսեսին»[11]։

Օրբելյանն իր այս տեղեկությունը, ինչպես ինքն է ասում, վերցրել է հայ նախարարների ու իշխանների Դահնամակից, որը բարեբախտաբար, թեև որոշ թերություններով, հասել է մեզ։ Պատմիչը հաստատում է այն փաստը, որ հայկական բանակի չորս զորական խմբավորումների կամ զորավարությունների բաժանումը տեղի է ունեցել Տրդատ III-ի ժամանակ և որ զորական այդ խմբավորումները գլխավորելու համար թագավորը նշանակել է հրամանատարներ-բդեշխներ կամ, ինչպես գրում է Օրբելյանը, «երկրորդ հրամանատարս ի վերայ ամենայնին»։ Այսպիսով, մենք ունենք մի նոր փաստ, որ հաստատում է Խորենացու վկայությունը Տրդատ III-ի զինվորական ռեֆորմի մասին։ Օրբելյանը նաև լրացնում է Խորենացուն, նշելով, որ ռեֆորմը Տրդատը իրականացրել է Հռոմեական կայսրության օրինակով («ըստ սահմանի կայսերացն Հունաց») և որ այն տեղի է ունեցել քրիստոնեությունը պետական կրոն հանաչելուց հետո։

Տրդատի զինվորական ռեֆորմը իր արտահայտությունն է գտել հայ նախարարների ու իշխանների Դահնամակում, որը, ինչպես երևում է, ունեցել է երկու մաս. առաջին մասում արձանագրվել է քաղաքացիական իշխանության պաշտոնների և գահերի դասակարգումը, իսկ երկրորդում՝ զինվորականը[12]։

10 Թովմա Արծրունին, խոսելով Սմբատ թագավորի գործունեության մասին, գրում է, որ նա «զպատիւ մարզպանութեան գահակալութեան հաւատացեալ ըստ կարգի բարձրարերձութեան թագաւորաց հայոց, մանավանդ Մեծի Տրդատայ» (տե՛ս «Թովմայ վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ, 1887, III, գլ. ԻԴ)։

11 «Ստեփանոսի Օրբելեան Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1911, էջ 24—25 (ընդգծումը մերն է— Ա. Դ.)։

12 Որ այդ երկու մասերը կազմել են մի միասնական փաստաթուղթ հայ նախարարների և իշխանների գահերի ու պատիվների մասին, երևում է Գահնամակի ներածականից։ «[Իմ Սա]հակայ խնդիր արարեալ ի դրան յԱրտաշէսի թագաւորի զոր ի Տիսպոնն խաւսցեալ եթէ ես զուամական զնամա զոր Արտաշրի ի դիւանին տեսի ի բաղոց Ժ։ Եւ Վռամայ արքայի եւ բարերարի եւ գիր արարի ես Սահակ կաթողիկոս թէ որպէս Ձեր բարերարութիւնդ հրաման տացէ հայոց ազատաց եւ տանուտէրանց որպէս յառաջ առ հայոց ազգին, նոյնպէս և ի ձերում դիւանի շահհամարին առնել, որ յայսմ հետէ հայոց ազատաց եւ տանուտէրանց գահ ի յայտ լինէր։ Նոյնպէս ներսէհ հրամանաւ արքայից արքայի եւ ես [Սա]հակ հայոց կաթողիկոս կնքեցանք զդահնամակին եւ եդանք մատանի արքայից արքայի եւ զմերս. եւ է այսպէս արդար եւ ճշմարիտ։

Այստեղ մեզ հետաքրքրում է Գահնամակի[13] երկրորդ մասը, որը վերաբերում է զինվորական իշխանություններին և հայտնի է Զորանամակ անունով։ Ահա այդ մասը[14].

Արևմտեան դուռն

1	Անգեղ տուն	ՎՆ
	Բդեշխն Աղձնեաց	Տ
	Բրզնունական	Վ
	Մանաւազեան	Ռ
5	Բաղարատունի	Ռ
	Խորխոռունի	Ռ
	Ծոփացի	Ռ
	Վահունի	Ռ
	Ապահունի	Ռ
10	Գնունի	Շ
	Բասենացի	Ռ
	Պալունի	Յ
	Ընծաքին	Տ
	Մանդակունի	Յ
15	Սաղկունի	Յ
	Վարաժնունի	Յ
	Այծենական	Ճ
	Առուենեան	Յ
	Վարժնունեան	Ճ
	Սպան(դ)ունի	Յ
21	Ռափսեան	Ճ

Արեւելեան դուռն

1	Սիւնի	Ա՛ՔՆ
	Ամասկոնի	Մ
	Աւածացին	Մ
	Վարձաւունի	Մ
5	Տամրարացի	Ճ
	Մազազացի	Ճ
	Յողկեպան	Ճ
	Բրզճունի	Ծ
	Վառնունի	Ծ
10	Բաքան	Ծ
	Կճրունին	Ծ
	Գուկանն	Ծ
	Պատսպարունին	Ծ
	Դազրիկան	Ծ
15	Վիժանունի	Ծ
	Զանդաղան	Ծ
	Սոդացի	Ծ
	Աքաձեցի	Ծ
	Ասճշնեան	Ծ
	Կինան	Ծ
21	Տագրեան	Ծ

Հիսիսային դուռն

1	Բդեշխն դուզարաց	ՏՇ
	Կամսարական	Ռ
	Կասպեցի	Վ
	Ուտէացի	Ռ
5	Ծաւդէացի	Ռ
	Տայեցի	Ռ
	Մամիկոնեանն	Ռ
	Վանանդացին	Ռ
	Գարդմանեցին	Ռ

Հարաւային դուռն

1	Կաղմէացի	Ա՛ՎՄ
	Կորդուացի	Ռ
	Արծրունի	Ռ
	Որշտունի	Ռ
5	Մոկացի	Ռ
	Գողթնեցի	Շ
	Անձևացի	Շ
	Հարուժեան	Ճ
	Տրպատունի	Ճ

13 Գահնամակը առաջին անգամ լուրջ կերպով ուսումնասիրել է Ն. Ադոնցը իր «Армения в эпоху Юстиниана» աշխատության մեջ, ուր տվել է այդ փաստաթղթի լավագույն ընթերցումը։ Իր ուսումնասիրության ընթացքում նա արել է մի շարք արժեքավոր դիտողություններ ու եզրակացություններ։ Ադոնցը Գահնամակը ուսումնասիրել է հայ նախարարների քանակը որոշելու տեսանկյունից և հենց այդ էլ կանխորոշել է նրա ուսումնասիրության ընույթն ու ուղղությունը։

14 Տե՛ս Н. Адонц, նշվ. աշխ., էջ 251—252։

10	Որդունի	Զ	10.	Մեհնունի	Ճ
	Առուեղեանքն	Շ		Ակէացի	Յ
	Աշոցեան	Շ		Զարէհուանեայ	Յ
	Հիմաքսեան	Զ		Եր(ու)անթունի	Յ
	Հընթունի	Յ		Համաստունեան	Ճ
15	Բոխայեցի	Յ	15	Արտաշեսեան	Յ
	Հաբեղեան	Յ		Սագրատունի	Ճ
	Աբեղեան	Յ		Աբրահամեան	Ժ
	Հաւնունի	Յ		Տրունի	Յ
	Սահառունի	Յ		Հուժունի	Մ
20	Ձեւնականան	Յ	20	Քաջբերունի	Ճ
	Աշխադարեան	Ճ		Հոդունի	Ճ
22	Վարազարտիկեան	Ճ	22	Մուրացան	Յ

«...Եւ զոմանս ի յայլ աշխարհս գրաւեալս. եւ լինի թիւ մարտիկ արանց որ ընդ ազգաւք ձդ-ից հազարաց թող զսպասաւորս դրանն արքունի՝ որ է ոստանդ որք ի պատերազմ ելանէին ընդ ա/ր/քայի եւ մարդպետական որէ ներքինի պահպան ի վերայ թագուհւոյն եւ գանձուցն եւ ընդ ամենայնն թիւ զօրացն հայոց՝ որէ հարիւր եւ քսան հազարաց»։

Բերված փաստաթուղթը, թեև սկզբից և վերջից ունի լուրջ վնասվածքներ, այնուամենայնիվ որոշակի պատկերացում է տալիս IV դարի Հայաստանի զինված ուժերի կառուցվածքի մասին։ Նրանից երևում է, որ Տրդատ III-ի զինվորական ռեֆորմից հետո հին հայկական պետության զինված ուժերը կազմված էին չորս սահմանապահ և մեկ ներքին՝ արքունական կամ պալատական կանոնավոր բանակներից, որոնց շարքերում եղել է շուրջ 120 հազար հեծյալ մարտիկ։ Դրանցից 80 հազարը կազմում էին սահմանապահ բանակները, իսկ 40 հազարը՝ ներքին, արքունական բանակը։ Յուրաքանչյուր սահմանապահ բանակ բաղկացած է եղել 18—21 հազար մարտիկից, որոնք խմբավորված էին 21—22 ստորաբաժանումների կամ իշխանությունների մեջ։ Բանակի ստորաբաժանումները գլխավորում էին իշխանները, որոնց հրամանատարության տակ կար 4000, 3000, 1000, 600, 500, 300, 200, 100 և 50 հեծյալ մարտիկ։ Զորականների քանակը, պետք է ենթադրել, որոշում էր հրամանատարների տեղը Արշակունիների պաշտոնների հիերարխիայում։

Հասկանալի է, որ մենք հնարավորություն չունենք ստուգելու փաստաթղթում բերված թվական տվյալները, բայց ինչպես նկատել է Ն. Ադոնցը[15], նրանք հեռու չեն իրականությունից։

Տրդատ III-ի զինվորական ռեֆորմի հետևանքով ստեղծված հայկական բանակը, համեմատած բյուզանդականի (հետագայում՝ նաև պարսկականի) հետ, ուներ տեղական իր առանձնահատկությունները։ Հայաստանը իր տերիտորիայով ավելի փոքր էր, քան Հռոմեական կայսրության չորս երկրամասերից որևէ մեկը։ Դրա համար էլ հայկական կուսակալությունն ու բդեշխությունը իրենց կառուցվածքով տարբերվում էին ինչպես Հռոմեական կայսրու-

15 Տե՛ս Н. Адонц. Նշվ. աշխ., էջ 286։

թյան պրեֆեկտուրայից և զինվորական մագիստրությունից, այնպես էլ պարսկական քուստակից և սպահրեդությունից։ Հայկական բդեշխությունը ուղղակի բաժանվում էր առանձին զինվորական իշխանությունների՝ իշխանների գլխավորությամբ, իսկ բյուզանդականը բաժանվում էր կոմսությունների, որ իր հերթին բաժանվում էր դքսությունների։

Հայկական բանակի մյուս առանձնահատկությունն այն էր, որ նրա կառուցվածքային ստորաբաժանումները՝ իշխանությունները, կազմակերպվեցին ըստ պատմականորեն ձևավորված վարչա-տերիտորիալ բաժանման, որ բացասաբար պիտի ազդեր բանակի միասնության վրա։

Տրդատ III-ի զինվորական ռեֆորմի կարևոր մասը արքունական զորքերի կազմակերպումն էր։ Հայկական գրավոր աղբյուրներում այդ զորքերը կոչվում են «զօրս յարքունի տանէ», «յարքունի տանէ ոստանիկ մարդիկ», «այրուձի յարքունի տանէ», «մարդպետական այրուձի» և այլն։ Բոլոր դեպքերում էլ խոսքը վերաբերում է հին Հայաստանի ներքին, արքունական, կամ պալատական զորքերին։

Այն հարցը, թե երբ և ինչ նպատակով են կազմակերպվել արքունական զորագնդերը, դեռևս իր ժամանակին զբաղեցրել է Խորենացուն։ Պատմիչը այդ զորամասերի կազմակերպումը վերագրում է Վաղարշակ թագավորին։ «Եւ գունդս և պահապանս դրան արքունի պատրաստել զչորսս,— գրում է նա,— զմի մի իւրաքանչիւր վառելովք ի նոյն հին զարմից թագաւորացն՝ որ ի Հայկայ, որ ընդ ժամանակս ժամանակս ժառանգութեան ի հարանց ստացեալ գեղս և դաստակերտս։ Իսկ աստ ուրեմն Պարսից թագաւորութեանն, որպէս լսեմ, յայլոց յարուցեալ գունդս և ոստան անուանել, ոչ գիտեմ թէ վասն սպառելոյ ազգին առաջնոյ, թէ վասն ընդդիմութեան իրիք լինելոյ շկապեալ և ի բաց ընկեցեալ զազգն, զայլս ի տեղիս նոցա յարուցին գունդս անուամբ արքունի։ Այլ առաջինն հաստատ ի զարմից թագաւորացն առաջնոց. որպէս և այժմ ի Վրաց աշխարհին, որ սեփծուղն կոչի»[16]։

Խորենացու այս հաղորդումը գրականության մեջ տարբեր կերպով է գնահատված։ Ոմանք հենվելով դրա վրա այն կարծիքն են հայտնել, որ ոստանիկները ծագել են առասպելական Հայկի ու Տիգրանուհու սերունդներից։ Սակայն դժվար չէ տեսնել, որ Խորենացու վերոհիշյալ հաղորդումը իրենից ներկայացնում է նահապետական ոգով մշակված հին ավանդություն։ Ն. Ադոնցի կարծիքով, ոստանիկները իսկապես թագավորական ծագում ունեն, բայց նրանք ծագել են ոչ թե հին թագավորների՝ Հայկի կամ Տիգրանուհու, այլ բացառապես Արշակունիների սերնդից[17]։

Ակադ. Հ. Մանանդյանը գտնում է, որ Ադոնցի այս տեսակետը համոզիչ

---

16 Խորենացի, գ. 2, գլ. է, էջ 104—105։ Ի դեպ, պետք է նկատել, որ բերված բաղվածքի աշխարհարար թարգմանության մեջ սխալ է սպրդել. «Եվ արքունի դռան չորս պահապան գունդ է նշանակում... Բուն հին թագավորների սերունդից... որոնք բուն ոստան էին կոչվում» (տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1941, էջ 72)։ Գրաբարյան տեքստի առաջին նախադասության մեջ «բուն ոստան էին կոչվում» բառերը չկա։ Ըստ Խորենացու, ոստան կոչված գունդը կազմակերպվել է հետագայում. «Իսկ աստ ուրեմն Պարսից թագաւորութեանն, որպէս լսեմ, յայլոց յարուցեալ գունդս և ոստան անուանել»։

17 Տե՛ս Н. Адонц, նշվ. աշխ., էջ 478—479։

չէ[18]։ Եվ իսկապես, անհնարին է պատկերացնել, որ Արշակունիները ունեցել են այնքան արու ժառանգներ, որոնցից հնարավոր է եղել կազմել շուրջ 40 հազարանոց բանակ։

Վիճելի է ոստանիկների սոցիալական դրության և նրանց դասակարգային պատկանելության հարցը։ Ըստ Հյուբշմանի ստուգաբանության, հայերեն «ոստան» տերմինը փոխ է առնված պհլ. ostan բառից և նշանակում է «արքունի երկիր կամ քաղաք»։ Համապատասխանաբար Հյուբշմանը «ոստանիկ» բառը թարգմանում է արքունի կամ թագավորական երկրից ծագած ազնվական կամ զորական[19]։

Ըստ Ն. Ադոնցի ոստան նշանակում է դուռ (двор), տառացիորեն՝ շեմ։ Նրա ասելով, ոստանը համընկնում է Արևմտյան Եվրոպայի սենյորական curtis dominicalis-ի հետ։ Ադոնցի կարծիքով ոստանը նախարարական տիրակալության կենտրոնն էր, նախարարների աթոռանիստ վայրը։ Ի տարբերություն նախարարների տիրակալությունների, Արշակունիների դոմեններ կոչվում էին արքունի տուն, արքունի ոստան[20]։ Եվ որովհետև, ըստ Ն. Ադոնցի, ոստան նշանակում է դուռ (двор), հետևաբար ոստանիկ նշանակում է ազնվական և համընկնում է ռուսական ազնվականության (дворянство) հետ[21]։

Ակադ. Հ. Մանանդյանը[22], համամիտ լինելով Հյուբշմանի կարծիքին, գտնում է, որ «ոստան» բառը համապատասխանում է պհլ. ostan բառին, նշանակում է «արքունիքին պատկանող երկիր»։ Իսկ «ոստանիկները» արքունական կամ թագավորական երկրից ծագող ազնվականները կամ զորագնդերն էին։

Ա. Փերիխանյանը իր «Հին հայկական ոստանիկները» հոդվածում[23] Հյուբշմանի և Մանանդյանի «ոստան» տերմինի մեկնաբանությունը որպես արքունական կալված (տիրույթ) համարում է ճիշտ։ Վկայակոչելով իրանապարթևական որոշ աղբյուրներ, նա գրում է, որ ոստան բառը Իրանում (որտեղից նա անցել է Հայաստան) գործածվել է ոչ միայն պալատի, թագավորական աթոռանիստ վայրի իմաստով, այլև նշանակում էր թագավորական երկիր, մարզ, պրովինցիա, թագավորական տնտեսություն և ընդհանրապես կենտրոնական վարչություն[24]։ Ինչ վերաբերում է ոստանիկներին, ապա, նրա կարծիքով, դրանք եղել են «ազատ հողատերեր», բնակվում էին արքունիքի կալվածներում և իրենց հողակտորների դիմաց պարտավոր էին ռազմական ծառայություն կատարել։ Ոստանիկ, գրում է Փերիխանյանը, տառացիորեն նշանակում է «պալատական, արքունի»։ Այդ կարգի մարդիկ արքունի երկրում ունեին գյուղեր ու դաստակերտներ։ Ոստանիկները, շարունակում է հեղինակը, «եղել են

---

18 Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, էջ 339։

19 Տե՛ս H. Hübschman, Armen. Grammatik. էջ 215։

20 Տե՛ս Н. Адонц. նշվ. աշխ., էջ 463։

21 Նույն տեղում, էջ 476—477։

22 Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, էջ 338։

23 Տե՛ս «Вестник древней истории», 1956, № 2, էջ 44—68։

24 Նույն տեղում, էջ 47։

տիրապետող դասակարգի ներկայացուցիչները», թագավորական երկրում նրանց տրված կալվածները համարվում էին «պայմանական ժառանգական»[25]։

Մեր կարծիքով, հայկական մատենագրական աղբյուրներից երևում է, որ ոստանը արքունի տունն է, կամ արքունի երկիրը, իսկ ոստանիկները արքունի բանակի մարտիկներն են։ Սկզբնաղբյուրներում արժանահավատ տվյալներ չկան պնդելու, որ III—IV դդ. հին Հայաստանի արքունի երկրում ոստանիկները ունեցել են կալվածներ, գյուղեր ու դաստակերտներ։ Ոստանիկների սպնվական լինելու մասին մեր կարծիքով սխալ եզրակացությունը բխում է այն զուտ արտաքին, ձևական համեմատությունից, որ գիտնականները անց են կացնում հին Հայաստանի ոստանիկների, «այլ ազատների» և միջնադարյան Եվրոպայի ասպետների (գերմանական Ritter-ների ու ֆրանսիական chevalier-ների) ու ռուսական дворянин-ների միջև։

Այստեղ մենք հնարավորություն չունենք հանդամանորեն քննարկել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հայկական բանակի անձնակազմի սոցիալական և իրավական վիճակի հարցերը։ Սկզբնաղբյուրներից հայտնի է, որ՝

1) այդ բանակը հիմնականում կազմվում էր գյուղացիներից և քաղաքի հասարակ ժողովրդից, 2) ստորին հոգևորականությունը՝ քահանաները, երեցները, սարկավագները և այլն, եկեղեցական կանոնների խախտման դեպքում զրկվում էին եկեղեցականի կոչումից և պարտավոր էին ծառայել բանակում ու պետության հարկ վճարել[26], 3) Տրդատ III-ի զինվորական ռեֆորմից հետո Հայաստանում կազմակերպվեց մշտական գործող կանոնավոր բանակ։ Գոյություն ունեին հատուկ զինվորական ճամբարներ, զորանոցներ, որտեղ զորականները անցնում էին զինվորական ծառայության։ Օրինակ, Շահապիվանը եղել է արքունական բանակի զորանոցը[27], 4) հայկական բանակը ինչպես Արշակունիների[28] ժամանակ, այնպես էլ բյուզանդական[29] ու պարսկական տիրապետության օրոք ղոշակավորվում էր պետության կողմից[30], 5) հին Հայաստանի զորականները («ոստանիկ մարդիկ» և «այլ ազատ մարդիկ») իրենց հիմնական մասով շինականներ-գյուղացիներ էին, նրանք հարկ էին վճարում

---

25 Նույն տեղում, էջ 57—58։

26 «Եթէ կնաւոր երէց գոցի պղծութեան եւ ի պոռնկութեան կամ այլ գործս չարեաց եւ ստուգեալ վկայիւք՝ քահանայութիւնն լուծցի եւ եկեղեցոյ բաժնէ հեռացեալ լիցի 3 (300) դրամ տուգանս տացէ... Եթէ երէց եւ եթէ սարգաւագ կանոն այդ կացցէ եւ նոքա ի կարգ զինուորութեան կացցեն եւ ի հարկս արքունի... (տե՛ս «Կանոնագիրք Հայոց». Ա, աշխատասիր. Վ. Հակոբյանի. Երևան, 1964, էջ 430—431)։ «Եւ երկականայք... ընդ զինուորս կացցէն... նոյնպէս եւ տգետք... վասն անուսումնութեանն ընդ զինուորս կացցեն եւ զհայրենի հող եւ ջուր նայցին եւ յարքունիս հարկ տացեն» (նույն տեղում, էջ 480)։

27 «Եւ էր բանակ թագաւորին ի Շահապիվանի ի բուն բանակի տեղն Արշակունեացն ի ներքոյ Միսեանց և ի վերայ ասպարիսացն» (տե՛ս Փավստոս, V, գլ. ԺԸ, էջ 99)։

28 «Ապա Մուշեղ որդի Վասակայ... ընտրեաց իւր արս ընտիրս միամիտս ազատս ազգային բառասուն հազար, միարանս և կսպմեաց զնոսա ձիով և ղոշակով և զինու...» (Փավստոս, V. գլ. Բ, էջ 158)։

29 «Խորհեր (Մուշեղ) զամենայն ազատս հայոց կայսերական ղոշակօքն զինուորել...։ Եւ թագաւորն Յունեաց յանձին ուներ մեծաւ խնդութեամբ առնել զայս» (Փավստոս, V, գլ. ԼԴ, էջ 198)։

30 «Եւ զիատեալ ոռնիկսն կարգէր անդրէն իւրամանչիւր» (Եղիշէ, էջ 122). «Կարգեաց նոցա ռոնիկ. և զպատրաստութիւն սպառազինուրեանն հրամայեաց յարքունիսն» (նույն տեղում, էջ 286)։

պետությանը, կատարում էին պարհակներ պետության օգտին և ծառայում էին բանակում։

Հարց է ծագում, ե՞րբ է կազմակերպվել Արշակունիների արքունական բանակը, ոստանիկների զորագնդերը։ Պետք է ասել, որ աղբյուրներում այդ մասին ուղղակի տվյալներ չկան։ Կարելի է ենթադրել, որ այդ զորամասերը ձևավորվել են Տրդատ III-ի զինվորական ռեֆորմի հետևանքով։ Այդ ենթադրության համար հիմք է հանդիսանում Խորենացու վերոհիշյալ հաղորդումը այն մասին, թե հին հայկական պետության զարգացման սկզբնական շրջանում գոյություն են ունեցել թագավորական գնդեր, որոնք հետագայում ենթարկվել են վերափոխման. նրանց տեղը ստեղծվել են ուրիշ գնդեր՝ «ոստան» կամ «արքունի» անվամբ։

Հայտնի է, որ նախքան Տրդատ III-ի զինվորական ռեֆորմը Հայաստանում գոյություն է ունեցել լավ սպառազինված գվարդիա։ Այն պահապան գնդերը, որոնց մասին խոսում է Խորենացին, ըստ էության հին Հայաստանի հենց այդ թագավորական գվարդիան էր, որը Փավստոսի մոտ կրում է «մատենիկ գունդ»[31] անունը։ Պատմիչը գրում է, որ երբ Խոսրովը (Կոտակը) լուր է ստանում, թե պարսից զորքերը պատրաստվում են պատերազմի, հրաման է տալիս Բզնունյաց Դատաբե նահապետին՝ «զուգագ հանել յաշխարհէ աւելի քան զչափն և զհամար զօրան մատենիկ գնդաւն ընդ առաջ նոցա խաղալ հասանել ի դիմի հարկանել, արգելուլ զթշնամիսն»[32]։ Այստեղ կարևորն այն է, որ պատմիչի հաղորդման համաձայն հին Հայաստանում գոյություն են ունեցել երկու տեսակ զորագնդեր՝ կանոնավոր զորամասեր, «մատենիկ գունդ», որը, ինչպես երևում է, բազմաբանակ չի եղել, և ոչ կանոնավոր զորամասեր, որոնք կազմավորվում էին միայն պատերազմի ժամանակ («զուգագ հանել»)։ Բայց, ինչպես ասվեց վերևում, հասարակական զարգացման նոր պայմաններում, ստրկատիրական հասարակարգի հգնաժամի պայմաններում, ռազմական ուժերի այդ տեսակները չէին կարող ապահովել պետության սահմանների պաշտպանությունը արտաքին թշնամիներից և երկրի ներքին միասնությունը։ Այդ պատճառով Հայաստանում մինչև այդ գոյություն ունեցող ռազմական կառուցվածքը ենթարկվեց լուրջ փոփոխության. Տրդատ III-ը, ինչպես տեսանք, ստեղծում է կանոնավոր բանակներ և տեղավորում է դրանք երկրի արևելյան, արևմտյան, հյուսիսային և հարավային սահմանամերձ շրջաններում։ Բացի դրանից, մեծ վստահությամբ կարելի է ասել, որ նա արմատապես վերակառուցում է «մատենիկ գունդը», նրա փոխարեն ստեղծելով 40 հազա-

31 Ն. Ա. Արզումանյանի «Հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվող «Մատեան գունդ» զորամասը» խորագրով հոդվածում (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 2, էջ 154—162) հեղինակը գտնում է, որ Սասանյան Պարսկաստանում և հին Հայաստանում գոյություն ունեին հատուկ, ընտիր զորագնդեր, որոնք եղիշեի ու Փավստոսի մոտ կոչվում են «մատեան գունդ», «մատենիկ գունդ»։ Պետք է համաձայնվել հեղինակի հետ և համարել սխալ այն կարծիքը, որի համաձայն Աքեմենյան Պարսկաստանի «Անմահների գունդը» և Սասանյանների «մատեան գունդը» կազմավորման ու համալրման նույնանման սկզբունքներ են ունեցել։ Այսուհանդերձ չի կարելի չնկատել, որ Ն. Ա. Արզումանյանի հոդվածում չկա «մատեան գնդի» բնութագրությունը, այսինքն հեղինակը չի պարզաբանել այն հարցը, թե ինչպիսի զորամաս էր դա, կանոնավոր թե անկանոն, ով էր նրան ապահովում զենքով, պարենով, ձիերով, սարքով և այլն։ Հեղինակն իր ուշադրությունը կենտրոնացրել է միայն «մատեան» բառի բացատրության վրա։

32 Փավստոս, III, գլ. Ը, էջ 17։

բանոց պալատական կամ արքունական բանակ[33], *որը կոչված էր ապահովելու երկրի ներքին միասնությունը։ Այդ զորամասերը գտնվում էին թագավորի և արքունիքի կառավարիչ՝ մարդպետի անմիջական հրամանատարության տակ։ Դրա համար էլ նրանք երբեմն կոչվում են «մարդպետական»։*

ВОЕННАЯ РЕФОРМА ТИРИДАТА III

Доктор юридич. наук А. М. ДАНИЕЛЯН

(Резюме)

Военная реформа Тиридата III (298—330) является частью тех преобразований, которые были осуществлены им в государственном строе древней Армении, и проводилась на тех же началах, что и реформа Диоклетиана (284—306) и Константина (306—337) в военном строе римско-византийской империи. Тиридат III разделил страну на четыре области или края, во главе которых поставил правителей — кусакалов. На этой основе военную власть он отделил от гражданской. В целях защиты границ государства Тиридат III образовал четыре пограничные регулярные армии, назначил военачальников-бдешхов, или спарапетов, которым подчинил местные военные власти. Царскую гвардию («матеник гунд») он реорганизовал в дворцовую армию, которая в источниках именуется «войском из царского дома» или «останскими людьми из царского дома».

---

33 «Գումարէր զօրսն ամենայն տանցն աւագանուոյն ընդ զօրսն արքունի» (Փավստոս, գիրք Գ, գլ. Ը). «սոյնպէս և զօրքն արքունի յիւրաքանչիւր տունս... դադարել էին» (նույն տեղում, գլ. Ի). «Գունդ կազմէր ի Հայոց մեծաց զազատ և զազատորդի, և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ» (Եղիշէ, I, էջ 17). «Բազում և այլ այրուձի՝ որ յարքունի տանէ անտի էր» (նույն տեղում, էջ 106). «Բազում և այլ ազատ մարդիկ, որ ոստանիկսն անուանեն՝ յարքունի տանէ» (նույն տեղում, էջ 133). «և այլ գունդք ի զօրացն մարդպետական այրուձիս» («Հազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1908, էջ 135). «Վահան Մամիկոնեան լոկ թուով նախարարաց և սակաւ այրուձիով ի յոստանդ» (նույն տեղում, էջ 317). «Նախարարք և ազատք և այլք յոստանիկ մարդկանէ» (նույն տեղում, էջ 376) և այլն։